

կրնային շարժիլ: Հարկաւ Ոսկերերանի ըսածին պէս պիտի մնային՝ գէթ ոմանք՝ կոչնատիրոջ տանը մէջ, մանաւանդ հեռի տեղէ եկողները, մինչեւ որ իրենց թմրութիւնը գիշերուան հետ միասին փարատէր եւ թոյլ տար դառնալ իրենց բնակարանները:

Հասած է այդ ժամը: Կոչնականք կ'ելնեն, կը զգենուն իրենց հագուստին այն մասերը՝ զորս հանած էին (աստ, 157-8): Տանուտէրը կը «յղարկէ» զանոնք (Մանդ. 59), հաւանօրէն իւր ապարանից «ընդերկար փողին» կամ սենեկաց հաղորդիչ նրբանցին միջէն (Փաւս. 204) կրկին ընկերելով անոնց մինչեւ դուռը: Մեկնելու պահուն մինչդեռ հրաւիրեալք շնորհակալ կը լինին, ընթրատուն քաղաքավարական վերջին ցոյց մ'ալ կ'ընէ, աղաչելով հրաւիրելոց՝ որ ներողամիտ լինին կոչնոց մէջ պատահած թերութեանց, եւ կամ վերստին գան մասնակցելու իւր սեղանին: Ասոնց մին կամ միւսը, կամ թերեւս երկուքն ալ կը նշանակէ Մանդակունւոյն սա բացատրութիւնը. «Զնոսա յղարկէ աղերսանօք» (59):

Շատ բնական է՝ որ այս տեղ ալ տային իբարու հրաժեշտի սովորական համբուրախառն ողջոյնը, որ ծանօթ է ուրիշ